ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
1995 թ.

digitised by A.R.A.R.@

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վերջին տարիներին Մայր Աթոռի տնտեսությունը գործել է ծանր, անկայուն ֆինանսատնտեսական պայմաններում:

Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի արտադրական ստորաբաժանումները աշխատում են իրենց հնարավորություններից շատ ցածր և անարդյունավետ: Այսպես, Մայր Աթոռի տպարանում օգտագործվում է արտադրական հզորությունների միայն 10-15 %-ը: Սա նշանակում է, որ տպարանը տարեկան չի թողարկում 180-200 միլիոն դրամի արտադրանք և Մայր Աթոռը տարեկան չի ստանում 50-60 միլիոն դրամի շահույթ: Առայսօր ունենալով 117,8 միլիոն դրամի արտադրական հզորություններ, "Վանք" դուստր ձեռնարկությունը չի տվել ակնկալվող արդյունք: Վիճակը բավարար չի նաև մոմի արտադրությունում, որը ունենալով սահմանափակ հզորություն լիարժեք չի գտագործել տարեկան աշխատաժամանակի ֆոնդը, աշխատել է մեկ հերթափոխ և արտադրել մոմի ամբողջ պահանջի միայն 10%-ը: 1994 թվականին Մայր Աթոռում արտադրվել է ընդամենը 8,5 միլիոն դրամի արտադրանք կամ հնարավոր թողարկվող արտադրանքի սոսկ 2,8 %: Արտադրանքի ծավալի ցածր մակարդակը արդյունք է արտադրության կազմակերպման և կառավարման անտարբեր մոտեցման:

Մայր Աթոռի արտադրության ծավալների մեծացման, արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործման նպատակով ձեռնարկված միջոցները արդեն տվել են իրենց արդյունքը: 1995 թվականի Մարտի վերջին շահագործման հանձնվեցին մոմի արտադրության երկու հոսքային գծեր, որոնք մինչև տարվա վերջը կարտադրեն շուրջ 100 տոննա մոմ: Տպարանը մինչև տարեվերջը կթողարկի ավելի քան 100 միլիոն դրամի, իսկ "Վանք" դուստր ձեռնարկությունը՝ 72,0 միլիոն դրամի արտադրանք:

Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգը հետագա լուրջ բարեփոխումների կարիք ունի: Առաջ է եկել նոր տնտեսական մոտեցումների ժամանակը, որի նպատակն է ստեղծել Մայր Աթոռի եկամուտների ստացման հստակ ձևավորված կայուն համակարգեր և միջոցներ:

Անցած Սեպտեմբերից էական քայլեր են արվել Մայր Աթոռի տնտեսական համակարգի կառուցվածքային բարեփոխման և տնտեսական ու ֆինանսական կայունացման ուղղությամբ: Խոսքը համակարգային կարևոր փոփոխությունների մասին է, հատկապես արտադրական ստորաբաժանումների (տպարանի, մոմի արտադրության և այլն) ընդհանուր տնտեսական հաշվարկի անցնելը, Մայր Աթոռի էլեկտրաջերմային (կաթսայատուն, դիզելատուն) համակարգի կազմավորումը, նյութատեխնիկական մատակարարման ապակենտրոնացված ժամանակավոր ենթակառույցների հաստատումը, պահեստային տնտեսությունների տարանջատումը և այլն:

Նշված և մյուս միջոցների հետևողական իրականացման արդյունքում 1994 թվականի Սեպտեմբեր -1995 թվականի Մարտ ամիսների ժամանակահատվածում առկա է Մայր Աթոռի ֆինանսատնտեսական գործունեության կայունացման և

digitised by A.R.A.R.@

բարելավման միտում, որը պայմանավորված է Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգում կշռադատված միջոցառումների հետևողական իրականացման հետ:

Մայր Աթոռի տնտեսական կայունացման և նրա հետագա աճի ապահովման կարևոր նախապայման պետք է հանդիսանան վճարային խիստ կարգապահության հաստատումը:

Հատկապես նկատելի է աշխատանքը անցած Սեպտեմբերից-Դեկտեմբեր Մայր Աթոռի կենսապահովման ստորաբաժանումների և ծառայությունների կայուն գործունեության ապահովման ուղղությամբ, որոնք և շարունակվում են այսօր: Առաջին հերթին այն վերաբերվում է Մայր Աթոռի ջերմամատակարարման և էլեկտրասնուցման անկախ և երաշխավորված համակարգի ստեղծմանը: Նախկինում Մայր Աթոռի ջեռուցման համար օգտագործվել են նավթավառեր, էլեկտրատաքացուցիչներ, որոնք չտալով անհրաժեշտ տաքություն, համարյա աննպատակ ծախսել են հազարավոր լիտր սալյարայուղ և նավթ: Այսպես, 1993-94 թվականներին ջեռուցման ժամանակաշրջանում ծախսվել է ավելի քան 200 հազար լիտր սալյարայուղ և 40.000 լիտր նավթ: Եվ միայն 1994 թվականի Սեպտեմբերին ձեռնարկված կոնկրետ և կտրուկ միջոցներով վերականգնվեց և վերակառուցվեց Մայր Աթոռի կաթսայատունը, այն տեղափոխելով մազութով աշխատելու համակարգի, ստեղծեց մազութի ավելի քան 90 տոննա տարողությամբ պահեստարաններ: Սրանով և ապահովեց սալյարայուղի ծախսի կրճատում 2-2,5 անգամ, իսկ նավթ ընդհանրապես այդ նպատակների համար չօգտագործվեց: Շնորհիվ կատարվածի, անցած ձմռան ժամանակաշրջանում Մայր Աթոռը ապահովվեց ինչպես ջեռուցմամբ, այնպես էլ տաք ջրի մատակարարմամբ: Հիշյալ ժամանակում հնարավոր եղավ նաև ավարտել նախկինում սկսած դիզելատան շինարարական և մոնտաժային աշխատանքները:

Մայր Աթոռի անխափան էլեկտրասնուցման ապահովման նպատակով կառուցվել է 500 մետր նոր կաբելային գիծ և ձեռնարկված միջոցների շնորհիվ այս տարվա Հունվարից սկսած Մայր Աթոռը հիմնականում ապահովվել է շուրջօրյա էլեկտրասնուցմամբ, որը թույլ է տվել անցյալ տարվա նույն ժամանակի համեմատ կրճատել դիզելատան կողմից ծախսվող սալյարայուղը ավելի քան 2 անգամ:

Աշխատանքներ են կատարվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր միաբանների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար: Կապիտալ նորոգման է ենթարկվել Երեմյան խուցերի բնակարանները, վերանորոգվել և վերականգնվել է դրանց ջերմամատակարարման գծերն ու մարտկոցները: Ընթացիկ վերանորոգման են ենթարկվել Վանատան սենյակների մի մասը, դրանց սանիտարատեխնիկական և էլեկտրական սարքերն ու սարքավորումները, կապիտալ նորոգման են ենթարկվել լվացքատան մեքենասարքավորումները, ավտոտրանսպորտային միջոցները և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ Մայր Աթոռի հոգևոր միաբանների և աշխարհական աշխատողների կենսամակարդակի բարձրացմանը ուղղված միջոցները բավարար չգտնվեցին (կապված ֆինանսական միջոցների սահմանափակ լինելու հետ): Չնայած 1994 թվականի Դեկտեմբերին Մայր Աթոռի աշխատողների ամսական աշխատավարձը կրկնապատկվել է, սակայն նրանց կենսամակարդակը այսօր մնում է շատ ցածր աստիճանի վրա:

digitised by A.R.A.R.@

Մայր Աթոռի կապիտալ շինարարության ծավալը 1994 թվականին կազմել է 39,5 միլիոն դրամ: 1995 թվականի Հունվար-Մարտ ամիսներին կատարված կապիտալ ներդրումները կազմել են 6,4 միլիոն դրամ կամ տարեկան ծավալի 9,3%-ը: Կապիտալ ներդրումները հիմնականում կատարվել են Սպիտակի նոր եկեղեցու շինարարության, Տաթևի վանքի և Օշականի թանգարանի վերակառուցման համար:

Անցած ժամանակաշրջանում պարզվեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի կազմակերպչական կառուցվածքը, կառավարման համակարգը, հաշվապահական հաշվառման և հաշվետվության գործող կարգը, ինչպես նաև վերոհիշյալ համակարգի ֆինանսատնտեսական բաղադրությունը չեն համապատասխանում ներկա խնդիրներին ու պահանջներին: Այս առումով դեռևս 1994 թվականի Մայիս ամսից ստեղծվել էր ֆինանսատնտեսական Հանձնախումբ:

Հաշվի առնելով անհրաժեշտությունը, 1994 թվականի Դեկտեմբերին այդ Հանձնախումբի հիմքի վրա այն վերակազմավորվեց և համալրվեց Հանձնախմբի նոր երկու անդամով:

Հանձնախումբը անցած ժամանակում (1994 Դեկտեմբեր-1995 Մարտ ամիսներ) նախապատրաստել և ընդունության է ենթարկել ֆինանսատնտեսական և արտադրական գործունեության վերաբերյալ ավելի քան 50 հարց: Այդ հարցերն ու խնդիրները եղել են խիստ կենսական ու անհրաժեշտ և որոնց նկատմամբ ընդունված որոշումների մի նկատելի մասը իրագործվել և տվել են դրական արդյունքներ: Այսպես, հաստատվել է տնտեսական գործունեության մի շարք բնագավառների կանոնակարգեր, մշակվել և իրականացվել են աշխատանքների կազմակերպման և դրանց նկատմամբ հսկողության իրականացման կանոններ: Ընդհանուր տնտեսական հաշվարկի են անցկացվել մոմի արտադրությունը, տպարանը և այլն: Արդյունքում Մայր Աթոռի արտադրությունից ստացված օգուտները ընթացիկ տարում կանեն 8-10 անգամ, իսկ արտադրության ոլորտում աշխատողների մաքուր եկամուտը կբարձրանա 3-3,5 անգամ:

Այսօր անհրաժեշտ է շարունակել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի կառավարման հետագա կատարելագործման գործընթացը: Այստեղ անշուշտ կան որոշակի կազմակերպչական խնդիրներ, որոնք անհրաժեշտ են անհապաղ լուծել:

Մշակվել և իրագործվում են նաև ներկա ծրագրի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1995 թվականի բյուջեի կատարման համար հստակ միջոցառումներ և մոտեցումներ:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

1995 թվականի տնտեսական բարեփոխումների ծրագրի գլխավոր նպատակը Մայր Աթոռի տնտեսական աճի և նրա կայուն տնտեսական պայմանների և նախադրյալների ապահովումն է:

1995 թվականի ֆինանսատնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի Մայր Աթոռի ֆինանսական դրության ամրապնդմանը, բյուջեի նվազուրդի և

digitised by A.R.A.R.@

արտասահմանյան միջոցներից ամենօրյա և ընթացիկ ծախսերի կրճատմանը և դրանց տնտեսական ծրագրերի նպատակներին ու խնդիրներին խիստ համապատասխանեցմանը:

1995 թվականի Հայաստանյայց թեմերում, Մայր Աթոռի վանքերում և եկեղեցիներում կրոնա-եկեղեցական ապրանքների (մոմ, գրականություն, հուշանվերներ և այլն) վաճառքից ստացվող եկամուտներից Մայր Աթոռի մասնահանումները պետք է կրեն հաստատագրված բնույթ:

Հաստատագրված եկամուտները պետք է կազմեն նրանց կողմից ստացած եկամուտների 70 %-ից ոչ պակաս:

Մայր Աթոռի բյուջեի հաշվին իրականացվող կապիտալ ներդրումները կկրճատվեն կամ կվերակազմավորվեն արտաքին ֆինանսավորման հաշվին իրականացվող նախաձեռնության ծավալների հետ համադրված կարգով: Դրանք կուղղվեն առաջին հերթին Մայր Աթոռի տնտեսության վերականգնման և վերակառուցման ծրագրերի իրականացմանը, մասնավորապես էլեկտրաջերմային և կենսական ապահովության այլ օբեկտների, կրթական հաստատությունների, եկեղեցիների և վանքերի ու դրանց տնտեսությունների վերանորոգման և վերականգնման աշխատանքներին:

Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի, ինչպես նաև Մայր Աթոռի մյուս ստորաբաժանումների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով 1995 թվականին կվերանայվեն ստորաբաժանումների կազմակերպչական կառուցվածքները, հաստիքային ցուցակները, կնայվեն նաև մի շարք ստորաբաժանումների և ծառայությունների կրճատման, դրանց վերամիավորման և գործունեությունների վերափոխման անհրաժեշտությունները:

Առաջնահերթ ուշադրություն կդարձվի արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի իրագործման, ինչպես նաև մարդասիրական օգնության կարգով ստացվող ապրանքների բաշխման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը:

Կիրականացվեն Մայր Աթոռի հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը համընդհանուր սկզբունքներին ու կարգերին համապատասխանեցման աշխատանքներ:

1995 թվականին նախատեսվում է իրականացնել կրոնա-եկեղեցական ապրանքների և ծառայությունների գների ու սակագների կարգավորման և վերահսկման միջոցառումներ: Անհրաժեշտության դեպքում, տարվա ընթացքում պարբերաբար կվերանայվեն դրանց գներն ու սակագները:

1995 թվականին նախատեսվում է իրականացնել հոգևորական պաշտոնյաների և Մայր Աթոռի ոչ արտադրական ոլորտի աշխատողների աշխատավարձի պարբերական բարձրացում: Դրա հետ մեկտեղ նախատեսվում է 1995 թվականին Մայր Աթոռի բոլոր աշխատողներին անցկացնել վարձատրման նոր համակարգի, որը նախատեսում է աշխատանքի լրացուցիչ վարձատրումը անմիջական կապի մեջ դնել աշխատանքի որակի, աշխատողի պատասխանատվության հետ, էականորեն տարբերակելով դրանք պաշտոնային ռոճիկներից և դրույքաչափերից: Այս միջոցառումները 1995 թվականին կապահովեն Մայր Աթոռի աշխատողների միջին

digitised by A.R.A.R.@

ամսական աշխատավարձի 50 %-ի աճ:

1995 թվականին նախատեսվում է մշակել և ընդունել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևորականների կենսաթոշակային ապահովման նոր կանոնակարգ, որը կնախատեսի այդ բնագավառի նկատելի բարեփոխումներ: Այս կանոնակարգով կնախատեսվի նաև պետական կենսաթոշակի անցած աշխարհական աշխատողներին Մայր Աթոռի կողմից լրացուցիչ կենսաթոշակներ կամ նպաստներ նշանակելու համակարգեր:

1995 թվականին նախատեսվում է ստեղծել նաև բնակչության խիստ կարիքավոր և սոցիալապես անպաշտպան խավերի առանձին մարդկանց մարդասիրական օգնության ծրագրեր ու ֆոնդեր: Նախատեսվում է մշակել և իրագործել միջոցառումներ ուղղված Մայր Աթոռի հոգևոր միաբանության և մյուս աշխատողների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը:

1995 թվականին կշարունակվի ՀՀ օրենքին համաձայն դուստր ձեռնարկությունների հիմնադրման գործընթացը: Այդ նպատակով անհրաժեշտ է Մայր Աթոռի արտադրական ստորաբաժանումները և սպասարկման ծառայությունները ամրապնդել տնտեսապես, ֆինանսապես և կազմակերպչորեն, դրանց անցկացնելով ընդհանուր տնտեսական հաշվարկի: Ելնելով շուկայի պահանջներից կիրականացվեն "Վանք" դուստր ձեռնարկության գործունեության նկուն, ինչպես նաև վերամասնագիտացման առանձին ծրագրեր:

Հաշվի առնելով 1995 թվականին Մայր Աթոռի կողմից կառուցվելիք օբեկտների առաջնայնությունը, ձևավորվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բյուջեի հաշվին կառուցվող հետևյալ օբեկտների ցանկը.

- Մոմի արտադրության ընդլայնում և տեխնիկական վերազինում - 2,94 միլիոն դրամ
- Տպարանի վերանորոգում և տեխնիկական վերազինում - 1,2 միլիոն դրամ
- Սպիտակի նոր եկեղեցու շինարարություն - 42 միլիոն դրամ
- Օշականի թանգարանի վերակառուցում - 2,6 միլիոն դրամ
- Տաթևի վանքի վերակառուցում - 1,68 միլիոն դրամ
- Ս. Հռիփսիմե վանքի վերանորոգում - 1,26 միլիոն դրամ

Էլեկտրաջերմային համակարգի պահպանման համար հատկացումները կկազմեն 6,3 միլիոն դրամ՝ սարքավորումների ձեռք բերման, համակարգի վերանորոգման ու վերակառուցման նպատակով:

Ջրամատակարարման, այդ թվում տաք ջրամատակարարման, ոռոգման ցանցի և բակային տնտեսության վերանորոգման աշխատանքների համար նախատեսվում է հատկացնել 1,7 միլիոն դրամ:

1995 թվականին մշակվելու և հաստատվելու է արտասահմանյան օգնության օգտագործման առանձին ծրագիր՝ ուղղված Մայր Աթոռի տեխնիկական օգնության և զարգացման ծրագրերի իրականացմանը:

1995 թվականին նախատեսվում է Մայր Աթոռի ընդհանուր օգտագործման ավտոբուսներով իրականացնել փորձնական ուղևորափոխադրումներ Երևան-Մայր Տաճար երթուղով, ինչպես նաև պայմանագրային գներով ավտոտրանսպորտային

digitised by A.R.A.R.@

ազատ միջոցների տրամադրում ազգաբնակչությանը՝ կրոնա-եկեղեցական ընտանեկան միջոցառումների կազմակերպման համար:

1995 թվականին նախատեսվում է Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի և Քրիստոնեական Դաստիրակության Կենտրոնի գործունեության ֆինանսավորման համար տրամադրել 42,5 միլիոն դրամ:

1995 թվականին անհրաժեշտ միջոցներ կտրամադրվեն սոցիալական բնագավառի հոգևոր և մշակութային արժեքների ժառանգության պահպանման, նորի ստեղծման, կրթության և հոգևոր կադրերի պատրաստման համար, որոնք կարժանանան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությանը:

Հաստատված է
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ֆինանսատնտեսական և
արտադրության գծով Հանձնախմբի
1995 թ. Մարտի 25-ի որոշմամբ

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@